

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մարտի 10-ից 13-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Ղազարյան, Անի Խաչատրյան

2. Ջրադեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մաքսային հսկողության վարչության Նախնական մաքսային հայտարարագրերի հսկողության բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2024 թվականի մարտի 10-ից 13-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

2024 թվականի մարտի 11-ից 12-ը կայացել է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մաքսային կարգավորման խորհրդատվական կոմիտեին կից՝ լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի հերթական նիստը: Նիստի անցկացման նպատակն էր լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կիրառման շրջանակների ընդլայնման նպատակով առանձին պարզեցված ընթացակարգերի սահմանման, գործող ընթացակարգերի կատարելագործման հարցերի, ինչպես նաև լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման համար հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի քննարկումը:

6. Քննարկված թեմաները՝

Աշխատանքային խմբի նիստի օրակարգում ընդգրկված թեմաներն են՝

1) Լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող՝ մաքսային պահեստների մասով հատուկ պարզեցման սահմանմանը վերաբերող հարցը.

2) Մաքսային միության հանձնաժողովի 18.06.2010թ. «Այն ապրանքների մասին, որոնց նկատմամբ չեն կարող կիրառվել լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող հատուկ պարզեցումները» N 323 որոշման չեղարկման վերաբերյալ հարցը.

3) Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 437-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից որոշվող կարգին համապատասխան մաքսային մարմինների կողմից օգտագործվող նույնականացման միջոցները լիազորված տնտեսական օպերատորների կողմից կիրառելու մասով.

4) Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 13.12.2017թ. «Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքները բաց թողնելու հայտարարության մասին» N 171 որոշման մեջ կատարվող փոփոխությունների մասին հարցը՝ Եվրասիական տնտեսական անդամ չհանդիսացող պետության լիազորված տնտեսական օպերատորի նույնականացման համարը հայտարարարության մեջ նշելու մասով.

5) լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեստորում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց ապրանքների հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող հարցերի վերաբերյալ համապատասխան առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ինչի հիման վրա մշակվել են (կմշակվեն) համապատասխան իրավական նորմերը:

Առաջին հարցի շրջանակներում քննարկվել է Ռուսաստանի Դաշնության նախաձեռնությամբ ներկայացված՝ լիազորված տնտեսական օպերատորներին հատուկ պարզեցում տրամադրելու հարցը, մասնավորապես՝ երկրորդ և երրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորների կողմից «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների պահպանումը լիազորված տնտեսական օպերատորի կառույցներում, շինություններում (շինությունների մասերում) և (կամ) բաց հրապարակներում (բաց հրապարակների մասերում):

Երկրորդ հարցի շրջանակներում քննարկվել է Մաքսային միության հանձնաժողովի 18.06.2010թ. «Այն ապրանքների մասին, որոնց նկատմամբ չեն կարող կիրառվել լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվող հատուկ պարզեցումները» N 323 որոշման ակտուալությունը:

Երրորդ հարցի շրջանակներում քննարկվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 437-րդ հոդվածից մաքսային մարմինների կողմից օգտագործվող նույնականացման միջոցները լիազորված տնտեսական օպերատորների կողմից կիրառելու վերաբերյալ պարզեցման տրամադրմանը վերաբերող դրույթների բացառման հարցը, ինչպես նաև նշված հոդվածի 3-րդ կետի 7-րդ ենթակետը նույն հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված դրույթներին համանման սահմանելու վերաբերյալ հարցը, մասնավորապես՝ սահմանել, որ երկրորդ տիպի վկայական ունեցող լիազորված տնտեսական օպերատորներին տրամադրվում է պարզեցում՝ տրանսպորտային միջոցների բեռնասրահների (հատվածամասերի)

կամ դրանց մասերի վրա լիազորված տնտեսական օպերատորի կողմից տեղադրված կապարակնիքները մաքսային մարմինների կողմից որպես նույնականացման միջոց ճանաչելը:

Չորրորդ հարցի շրջանակներում քննարկվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողեգիայի 13.12.2017թ. «Մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքները բաց թողնելու հայտարարության մասին» N 171 որոշման մեջ կատարվող փոփոխությունների մասին հարցը, մասնավորապես՝ եթե կազմակերպությունն ունի լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող այն պետությունում, որի հետ Եվրասիական տնտեսական միության կողմից կամ անդամ պետության կողմից կնքվել է միջազգային պայմանագիր լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի փոխադարձ ճանաչման վերաբերյալ, ապա մինչև ապրանքների հայտարարագիր ներկայացնելը ապրանքները բաց թողնելու հայտարարագրի մեջ լրացուցիչ նշվում է այդ լիազորված տնտեսական օպերատորի նույնականացման համարը (այդ համարի մասին տեղեկատվություն ունենալու դեպքում):

Հինգերորդ հարցի շրջանակներում քննարկվել են լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող շրջանակային պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման նախագծի նորմերը (հաշվառման համակարգում տեղեկատվության ձևավորման, տեղեկատվության կազմի, տեղեկատվության պահպանման, մաքսային մարմիններին հասանելիության տրամադրման, հաշվետվությունների ձևավորման հարցեր):

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներն ամփոփվել են համապատասխան արձանագրությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներով՝

1) առաջին հարցի շրջանակներում ձեռք է բերվել համաձայնություն նշված պարզեցումը լիազորված տնտեսական օպերատորների համար կիրառելու մասով համապատասխան որոշումը լրամշակելու և անդամ պետություններին համաձայնեցման ուղարկելու մասով՝ մաքսային պահեստում իրականացվող դրոշմավորման հարցում բացառություն սահմանելով Բելառուսի Հանրապետության լիազորված տնտեսական օպերատորների համար.

2) երկրորդ հարցի շրջանակներում համաձայնեցվել է Մաքսային միության խորհրդի 18.06.2010թ. N 323 որոշումը չեղարկելու վերաբերյալ որոշման նախագիծը՝ բացի Բելառուսի Հանրապետությունից, որը իր դիրքորոշումը կներկայացնի Եվրասիական տնտեսական հանձնաժողով.

3) երրորդ հարցի շրջանակներում ձեռք է բերվել Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 437-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունների իրականացման մասով համաձայնեցում անդամ պետությունների միջև, բացառությամբ՝ Բելառուսի

Հանրապետության, որն այդ մասով իր վերջնական ձևավորված դիրքորոշումը կներկայացնի Եվրասիական տնտեսական հանձնաժողով.

4) չորրորդ հարցի շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովը կապահովի որոշման նախագծի լրամշակումն ու հետագա քննարկումը աշխատանքային խմբի հաջորդ նիստին"

5) հինգերորդ հարցի շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից նախագիծը լրամշակելու մասով՝ հաշվի առնելով նիստի ընթացքում անդամ պետությունների կողմից ներկայացված առաջարկությունները, իսկ չհամաձայնեցված հարցերը կքննարկվեն աշխատանքային խմբի հաջորդ նիստերի ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սամվել Ղազարյան

Անի Խաչատրյան

18.03.2024թ.